

Պ Ե Լ Տ Ե Ի Ս

Պ Ո Է Մ Ս

Ա. Ս. ՊՈՒՇԿԻՆԻ — Թարգմ. Յակ. Տէր-Գէորգեանի

ԵՐՐՈՐԴ ԵՐԴ

Հոգու խոր վիշտը արգելք է լինում
Ուկրաինայի ծեր զօրավարին
Յանդուգն, աներկիւղ ձգտելու հեռուն,
Իւր նպատակին անշեղ դիմում է,
Շէշդներ չհաբար կայսրի հետ զաղտնի
Նա իւր կապերը շարունակում է,
Բայց նոյն ժամանակ իւր ոտխների
Կասկածոյ աչքը խաբելու համար—
Խմբով բժիշկներ շուրջն է հաւաքում,
Կարծես Կանջւելիս լինի չարաչար,
Եւ հառաչելով օգնութիւն խնդրում,
Կրքի և հոգսի և հիւանդութեան,
Ռազմի և վշտի բոլոր պտուղներն—
Մօրալուար մահւան այս կարապիպներն,
Տանջանքի մահի՞՞մ գլորեցին նորան,
Ուզում է առնել սրբազան կարգը,
Իւր հովապիտին կանչում է ահա,
Եւ խորհրդաւոր օժանկիքը
Հասում է իւր նենդ ալիքների վրայ։

Անցնում են օրեր: Իզուր էր Մոսկւան
 Բոսկէ առ բոսկէ հիւրերին սպասում,
 Շէշներին համար, հին թշնամական
 Շիրիմների մէջ, աղօթքներ կարդում:
 Բայց Կարլոս յանկարծ երեսը դարձրեց
 Եւ Ուկրաինայ ուղմը փոխադրեց:

Եւ ժամը հնչեց: Ելաւ իւր մահճից
 Չարքաշ կմախքը—հիւանդ Մաղէսան,
 Կենդանի դիակն, որ բիւր ցաւերից
 Տանջւում էր երէկ իւր շիրմի վերան:
 Արդ զօրքի առաջ շրջում է զւարթ
 Իբրեւ Պետրոսի ոսոխ զօրաւոր,
 Հրացայտ աչքերը պսպղում հպարտ,
 Դաշոյնը շարժում և նժոյգն յորդոր
 Շեշտակի դէպի Դեսնան է վարում:—
 Ձիգ փարինների լծիցը ճնշւած
 Յայտնի խորամանկ կարգինալի պէս,
 Որ հռոմէական խոյրով պսակւած՝
 Դարձաւ և՛ ջահիլ, ողջ և՛ զւարթերս:
 Կայծակի նման լուրը փարածւեց,
 Յուզեց, մրկեց ողջ Ուկրաինան.
 Հնա միւս կողմն անցաւ, նա երդման զրժեց,
 Կարլոսի առաջ ինչպէս դաւաճան
 Նա խոնարհաբար բունչուկը թեքեց...
 Բռնկեց բոցը. ժողովրդական
 Կուրի արիւնոտ օրօրը ծագեց:

Ով կարէ արդեօք թագաւորական
 Անզուսպ զայրոյթը նկարագրել.
 Կարդում են բանադրանք ողջ սաճարներում,
 Դահիճն այրում է գեպմանի պապիկեր.
 Աղմկում, վիճում, նոր գեպման ընտրում.
 Եւ Ենիսէի ամալի ափից

Վաչուբէյ, Իսկրայի ընդանիքները,
 Խարւած Պետրոսը շուրջիւ է կանչում,
 Արդասւում նրանց հետ, փաղաքշում նորից
 Եւ փառք ու պարւով առաջ վարձաւորում:
 Մազէպայի ոսոխ—քաջարի հեծւոր
 Մերունի Պալէյն—ձգեց հեռաւոր
 Աքսորն և դարձաւ դէպ՝ Ուկրայնան,
 Դէպի բանակը Թագաւորական:
 Ապստամբութիւնն մնում է որբացած.
 Պարտարանի վրայ Թեւրը կախած
 Գլուխը վայր դրեց յանդուգն Չեչէլը, ²³⁾.
 Եւ զապարոթցի աւրամանը:
 Դու էլ—ազմական փառքի սիրահար,
 Որ սաղաւարտի հետ փոխեցիր Թագը,
 Քո ժամն էլ մօր է. վերջապէս տեսար
 Դեռ հեռաւորանից Պալլաւայի Թումբը:

Թագաւորական զօրքերը նոյնպէս
 Փոթորիկի նման նոյն տեղ շրտակեցին.
 Եւ երկու գնդեր երես առ երես
 Մի հովտի միջին բանակ խփեցին:
 Այդպէս է յաճախ կռիւներում ջարդւած,
 Առաջուց արդէն արնով արբեցած
 Գոռ ախոյեանը վճռական ժամին
 Տեսնում ցանկացած հակառակորդին:
 Չարախինդ Կարլոսն չը տեսաւ էլ արդ
 Նարւայի խղճուկ փախստականներ
 Յան ու ցրիւ եղած,
 Այլ պարտասփ շարքեր, փառահեղ, հանդարտ,
 Հնազանդ ու աշխոյժ՝ արագասլաց
 Եւ կազմ գնդերի,
 Անսասան պապնէշ նոցա սւինների:
 Բայց դարձեալ վճռեց—առաջ՝ լուսադիմին!
 Խորին քուն մտաւ շէգների բանակ.

Միայն երկու հոգի լուռ, կէս զիշերին
Հանդարտ շշնջում են մի վրանի տակ:

Ո՛հ, տեսնում եմ ես, օ հէ, իմ Օրլիֆ,
Աճապարեցինք աչակէս այնտեղի:

Յանդուզն և անպէտք հաշիւ բռնեցինք,
Գիրեմ, նորանից մեզ շահ չի լինի:

Իմ նպատակս երեխ կորաւ,

Շատ նշանաւոր մի վրիպակ ուրի—

Այդ Կարլոսը ստատածս չեղաւ:

Նա մի մանուկ է աշխոյժ, անվեհեր:

Երկու կամ երեք յաջող յաղթութիւն

Կարող է անշուշտ հեշտութեամբ տանել,

Ընթրիքի ժամին հասնել թշնամուն ²⁴),

Ռմբին ծիծաղով միայն պատասխանել ²⁵)—

Ո՛չ պակաս ճարպիկ

Քան որսս նեպածիք

Անցնել զիշերով թշնամու բանակ—

Ինչպէս որ այժմ—կազակ տապալիլ,

Վէրք հալուցանել վէրքի փոխանակ ²⁶)—

Բայց նա չէ կարող այլ ևս զիմադրել

Ինքնակալ հսկայ հակառակորդին:

Նա ճակատագրին ուզում է սպիւղել

Իւր զօրքի նման հնազանդել թմբկին:

Նա կոյր է, յամառ, թեթե ու անմիտ,

Գոռոզ, անհամբեր և շատ մեծամիտ:

Ի՞նչ է իւր յոյսը—Ասուած զիտէ այն:

Նա հակառակորդ նորանոր ոյժերն

Հին յաջողութեամբ կշռում է միայն:

Գիրեմ, կը փշրի նա իւր եղջիւրներն:

Ամօթ ինձ, որ իմ այս ծեր տարիքում

Մի բախտախնդիր զինւոր գըրաւեց:

Վախկոտ կոյսի պէս նորա քաջութիւնն,

Յաղթութիւնների անցաւոր բախտը

Աչքս շլացրեց:

Օ Ր Լ Ի Կ

Սպասենք դեռ կուին. թագաւորի հետ
 Նոր դաշն կապելու ժամը չէ անցած.
 Դեռ կարելի է չարիքը ուղղել.
 Զարդ կրելուց յետոյ Պետրոսն անկասկած
 Ձի մերժի մեզ հետ հաշտութիւն կապել:

Մ Ա Ջ Է Պ Ա

Ո՛չ, ուշ է արդէն. ոռոսաց թագաւորն
 Այլ ևս չի կարող ինձ հետ հաշտել.
 Վաղուց այրում է ինձ չարիքն անգոր,
 Վաղուց է անդարձ բախրս վճռել:
 Սգովի մօրն էր. մի գիշեր միասին
 Թագաւորի հետ զւարճանում էինք.
 Բաժակներ գինով փրփրում էին,
 Ճառերն էլ նրանց հետ տաքանում էին.
 Եւ ես համարձակ մի բռն ասացի...
 Զահիլ հիւրերը ողջ վրդովեցին.
 Թագաւորն յուզւած բաժակը թափեց,
 Սպառնաց, և սպիրակ բեխերս ձրեց:
 Իսկ ես լռեցի անգոր ցասմունքով.
 Բայց երդում տւի, որ վրէժս հանեմ:
 Եւ ինչպէս մի մայր, որ անհուն խնամքով
 Արգանդում պահում է իւր նորածնին—
 Պահել եմ երդումս. հասել է ժամը...
 Կը յիշէ նա ինձ ընդ միշտ յաւիտեան.
 Նորա պսակի թարժ տերեւների
 Փնէն եմ, պարփո՛ւ եմ ուղարկւած նորան:
 Կը տայ պարզեւներ, կեանքի թանգ ժամեր,
 Միայն թէ դարձեալ առաջւայ նման
 Նա Մազէպաչի բեխերը ձրէր:
 Բայց դեռ յոյս ունինք. թէ ո՞վ կը փախչի
 Այդ—արշալոյսը միայն կը վճռի:

Լռեց և փակեց յոգնած աչքերը
Ռուսաց թաղաւորի դաւաճանը:

Վառւում է ելքը նոր արշալոյսով,
Թնդանօթները հովտի մէջ շարւած՝
Արդէն դղրդում են բլուրներում:
Վարդագոյն ծուխը, թանձր օդերով
Վաղորդեան պայծառ շողերի զիմաց
Տարուբերելով՝ երկինք է ելնում:
Ջօրագնդերը ամուր սեղմեցին.
Նեպաճիգները՝ թփերի միջին.
Թռչում են բոմբեր, գնդակներ շաչում,
Սառն սւինները օդում ցոլացին:
Եւ յաղթանակի սիրած զաւակներ—
Կրակած թմբերով մղւում են շվէդներ,
Հեծելազօրքը թռչում է խռնւած,
Իսկ հեփեակը նորան հեփեում,
Եւ իրա անշարժ ու խուլ ծանրութեամբ
Նորա ընթացքն է ամրապնդում:
Եւ օրհասական դաշտի կռիւն ահեղ
Վառւում, թնդում է աչտեղ և այնտեղ:
Բայց ահա արդէն պատերազմական
Բախտը պարզապէս
Ծառայում է մեզ:
Գետին են փռւում կոյտերի նման
Հըրազարկ եղած զօրագնդերը.
Ռոզէնն պաշարւած՝ քաշւում է, գնում,
Իսկ Շլիպէնրախը անձնապուր լինում.
Խաւարում է նրանց փառքի համբաւը.
Ջարդում ենք նրանց բոլոր գնդերը:
Եւ պատերազմի Աստծոյ շնորհա՝
Օրհնութիւնն է մեր շաւղին դրօշմւած:

Եւ ոգևորւած սրբազան կրակով
 Պետրոսի ձայնը լսելի եղաւ.
 Մեզ հետէ Ստուած. ի գործս—եւ խմբով,
 Շրջապատւած իր սիրելիներով,
 Վրանից դուրս ելաւ:
 Փայլում են աչքերն, դէմքն է սոսկալի.
 Շարժւածքն է արագ. գեղեցիկ է նա.
 Կարծես երկնային պայուհաս լինի.
 Եկաւ... մի նժոյգ ահա մօտ բերին.
 Խոնարհ կանգնած էր հաւաքարիմ ձին.
 Եւ օրհասական կրակի հօտ զգալով
 Դողում է, աչքը խէթ-խէթ է գցում,
 Հպարտանալով հզօր հեծւորով,
 Դէպի ռազմական բոցերն է սլանում:
 Մօտ է կէսօրը: Տօթը աչրում է.
 Հնձւորի նման կռիւը հանգչում է.
 Տեղ, տեղ աչքի են ընկնում կաղակներ.
 Կարգաւորւում են զօրագնդերը.
 Լռել է նաև երաժշտութիւնն.
 Բլուրների վրայ թնդանօթները
 Կտրել են իրանց քաղցած դղրդիւն:
 Եւ յանկարծ հովտում թնդալով ահա
 Որոտաց հեռու մի ահեղ օուտն—
 Ահհամբեր զօրքը տեսաւ Պետրոսին:
 Եւ նա սլացաւ նոցա առաջով
 Ինչպէս որ կռիւը—հզօր, խնդաղին.
 Նա ամբողջ դաշտը ուտում էր աչքով.
 Նորա յետեից խմբով գնում էին
 Պետրոսեան բնի այն թռչունները,
 Որոնք նորանից անբաժան էին.
 Կառավարութեան, ռազմի հոգսերում,
 Եւ փոփոխական երկրային թախտում,
 Նորա ընկերներ, զաւակներն էին:
 Եւ Շերեմեյիւն ազնւական,

Բրիւսը, Բոուէրը նոյնպէս և Ռայպնին
 Եւ ճակարագրի փայփայած որդին—
 Տիրապետը կէս Թագաւորութեան:

Եւ իւր ռազմասէր զօրքի կապադոն
 Շարքերի առաջ Կարլոսն էլ ահա,
 Վէրքից փանջելով անշարժ և զժգոյն
 Երեաց նոյնպէս, իր մահճի վրայ.
 Իրան յետևում իւր զօրականներ:
 Եւ նա մըքերին եղաւ անձնապուր.
 Վրդոված հաշեացքն արտայայտում էր
 Մի նոր վրդովմունք—օտար, անսովոր:
 Յանկալի կռիւը կարծես Կարլոսին
 Գցել էր փարփամ մըքերի միջին:
 Եւ յանկարծ ձեռքը Թոյլ կերպով շարժեց
 Եւ ուսներին վրայ զօրքը խաղացրեց:

Եւ հովտում նոքա Թագաւորական
 Բանակներն հետ ծխում կռիւ մտան.
 Եւ Թնդաց կռիւ,
 Պարտաւայի կռիւ:
 Կրակում, շիկարապ խիտ կարկտի տակ
 Շարքեր, նոր շարքեր ընկնում են կուտակ.
 Հեծեալզօրքը մութ ամպի նման

Սանձով, դաշոյնով

Խուլ աղմկելով

Խառն, անկանոն զարկում են իրար.
 Եւ զիակաների հին կոչութի վրայ
 Նոր, Թարմ կոչութի գոյացնում է նա.
 Պողպատէ զնդերն շուրջը, ամեն տեղ
 Թռչում են, շաշում, հարածում ահեղ,
 Մահ են փարածում, արեան մէջ վշշում:
 Ռուսը շէգներին ջարդում է, փշրում.
 Թմբկի Թնդոցներ,
 Ճիւղ, կրճարոյներ,

Թնդանօթնիրի ասեղ դգրդիւն,
 Հառնչ, խրխնջոց, ձիերի դոփիւն,
 Եւ մահ ու դժոխք է շուրջը շնչում...

Իրարանցման և յուղմունքի ժամին,
 Զօրականները բորբոքող կռիւն
 Ոգեորութեամբ հանգիստ նայում են
 Եւ պարերազմի բախումն են դիտում:
 Յաղթ և պարպութիւն նախարեսնում են
 Եւ առանձնակի զըրոյց են անում:
 Բայց ով է Մասկեայի ցարի մօր կանգնած
 Ալեքարդ գլխով այն զինւորականն,
 Երկու կազակի թևերին յենած,
 Նայում է վորձւած հերոսի նման,

Եռացող կռիւն:

Նա ծեր է, այլ ևս չի հեծնի իւր ձին,
 Հալ ու մաշ եղաւ խաւար աքսորից,
 Է՛լ կազակները Պալէչի կանչին
 Ձեն հաւաքելու ամենայն կողմից:
 Բայց ինչո՞ւ յանկարծ նորա աչքերը
 Փայլադալեցին. խաւարի նման
 Ինչո՞ւ զայրոյթով խոժոռեց դէմքը,
 Ի՞նչը կարող էր վրդովել նորան.
 Գուցէ ռազմական խիտ ծխի միջին
 Տեսաւ հին ոտիս նա Մազէպային.
 Եւ անգոր ծերը արեց իւր րարիքն,
 Որ էլ պէտք չէին այդ իսկ րոպէին:

Բարեկամերով, քաջ սերդուկներով
 Մի խումբ խռովարար իւր կազակներով
 Շրջապարւած էր Մազէպան. կռիւն
 Նայում էր սուղած մաքրի միջին:
 Յանկարծ մի պայթիւն... Ծերը նայում էր,
 Դեռ Ույնարովսկու ձեռքին նորարձակ

Հրացանի եղէգներ ծխոտում էր.
 Եւ փոքր հեռու մի ջահիլ կազակ
 Գետնի վրայ, արեան մէջ թաւալւում էր:
 Իսկ իւր ձին փոշոտ, ողջ փրփուր կտրած,
 Ազատ զգաց իրան, թռաւ, սլացան,
 Եւ հեռու, հեռու հրդեհով պատած
 Տարածութեան մէջ խորասուզեցաւ:
 Բարկութեան բոցը վառւած աչքերում,
 Դաշոյնը ձեռքին—կատաղի կազակն
 Դէպի Մազէսյան էր ուղիղ դիմում:
 Ծերը մօտեցաւ հարցումով նորան,
 Բայց խեղճ կազակը արդէն մեռնում էր,
 Հանգած աչքերով ոռոտաց թշնամուն

Դեռ սպառնում էր,

Եւ Մարիայի քաղցրաձայն անունն
 Կապընկած լեզուն հազիւ թոթւում էր:
 Բայց մօտ է ահա ընկն յաղթութեան.
 Ուռն... ջարդեցինք. շէտհերն նահանջեն.
 Ս' փառաւոր ժամ, օ վեհ քեսարան,
 Մի հարւած դարձեալ, և ոտին արդէն
 Փախուստ է տալիս. նորա չեփեից
 Հեծելազօրքն է հարւածներ փեղում.
 Սրերը բթանում են սպանութիւնից,
 Զորս կողմը բոլոր խաւար է պատում:
 Կարծես մօրեխի սեւ-սեւ կոյսերից
 Անթիւ դիերով դաշուն է սեւանում:

Չւարձանում է Պետրոսն: Հարար և առոյգ
 Եւ փառքով լի է նորա հայեացքը.
 Արքայաւայել, շքեղ է ինջոյք,
 Ուրախ գոչում է իւր բոլոր զօրքը.
 Իսկ նա վըրանում հիւրասիրում է
 Ե՛ւ իւր, և՛ օտար զօրապետներին.
 Եւ ազնական իւր գերիներին

Նա փաղաքշում է,
 Եւ իրա նախկին ուսուցիչների
 Կենաց պարպում է:
 Բայց ո՞ւր է արդեօք առաջին հիւրը,
 Առաջին ահեղ մեր ուսուցիչը.
 Որի զաղրնահաս ոխը բազմամեայ,
 Արմատից կտրեց հերոսը օրւայ:
 Ո՞ւր է չարագործն, ո՞ւր է Մազէպան,
 Ո՞ւր է երկիւղից փախել այն Յուդան.
 Եւ ինչո՞ւ կայսրը հիւրերի մէջ չէ,
 Ինչո՞ւ դաւաճանը ղլխապւած չէ:

Մերկ անապատի լռութեան միջին
 Գեորմանն ու կայսրը սլանում են միասին.
 Փախչում են... բախտը կապել է նոցա:
 Ներքին չարութիւնն, վրանդ մօրակայ,
 Նոր ոչոք են տալիս յաղթւած կայսրին:
 Ռուսների ձեռքից փախչում ղլխիկոր,
 Իւր ծանր լէրքը տւած մոռացման:
 Եւ հաւաքարիմ զօրք և սպասաւոր
 Շնչասպառ, հազիւ հեպեում են նրան:

Հեռու, ուշագիւր շրջահայելով
 Դաշտավայրերի լայն կիսաշրջանն,
 Նոքա միասին սլանում են շտապով...
 Յանկարծ առաջներն մի խուփոր տեսան:
 Ի՞նչ էր... Մազէպան կարծես վախեցաւ,
 Ինչո՞ւ նա շեղեց շինութեան մօրով,
 Մորակեց իւր ձին և անյայտացաւ:
 Արդեօք ծերուկին ամացի սրահը,
 Կամ առանձնացած տունը և ազգին,
 Դէպ՞ զաշտը նայող բացւած աչդ դուռը —
 Մի հին պարմութիւն այժմ չիշեցրին:
 Ս', դու կործանի՛չ սուրբ անմեղութեան,

Ծանծթ է քեզ այս օթեանն արդեօք,
 Այս տունը—երբեմն ուրախ և անհոգ,
 Այս տունը—որտեղ դինուց տաքացած
 Բարեկամների շրջանում նստած՝
 Ճաշի ժամանակ կատակում էիր:
 Անշուք աղաստանն արդեօք չիշեցիր—
 Ուր համե՛ստ, խաղաղ հրեշտակն էր բնակում:
 Այգին—որտեղից գիշերույց մթնում
 Դուրս բերիր նորան... Օ՛, ճանաչեցիր...

Ողջը ընկղմեց մութ սրահներում:
 Տարածւած կապույտ Դնեպրի եզերքին
 Զգոյշ նիրհում է ժայռերի միջում
 Պերոսի և ոռոսաց թշնամին:
 Հերոսի քունը խնայում են ցնորքներն,
 Նա Պալտաւայի կորուստը մոռցաւ.
 Բայց Մագէպայի հանգիստը շփոթ էր,
 Նորա մռայլ հոգին հանգիստ չը գտաւ:
 Յանկարծ գիշերույց լուսթեան միջին
 Կանչում են նորան, զարթեց, փնտրում է,
 Իւր գլխավերև մալուխ սպառնալով
 Մէկը հանդարտիկ լուռ խոնարհում է:
 Նա սառսռաց ուժգին, ասես կացնի տակ.
 Նորա առաջին դժգոյն և նիհար,
 Յնցոտիք հազած անխօս, հերարձակ,
 Փոս ընկած աչքեր պսպղում են պայծառ,
 Լուսնի շողերում կանգնած առերես.
 «Երազ չէ՞ արդեօք. Մարիան, դու ես...»

Մ Ա Ր Ի Ա

Ա՛խ, հանդարտ, հանդարտ բարեկամ... լսիր,
 Հայրս և մայրս հէնց նոր նիրհեցին.
 Սպասիր, մեզ այստեղ կարող են լսել...

Մ Ա Զ Է Պ Ա.

Մարիան, խեղճ Մարիան... ուշքի եկ, խօսիր.
Աստուած իմ, ասան, ի՞նչ է պատահել:

Մ Ա Ր Ի Ա.

Լսիր, ինչպիսի ստոր խարդաւանանք,
Ի՞նչ ծիծաղաշարժ բան են պատմում նրանք.
Իբրեւ մի գաղտնիք նա ինձ հաղորդեց,
Որ իմ խեղճ հօրը տեսել է մեռած.
Եւ ինձ լռելեայն կամաց ցոյց տւեց
Ալեոր մի գլուխ.— արարիչ Աստուած...
Ասա, ո՞ւր փախչե՞նք չար լեզուներէց.
Մորած իր, այն գլուխը մարդկային չէր,
Այլ բոլորովին գալլի գլուխ էր:
Տես, ինչո՞վ էր նա ինձ ուզում խաբել.
Ամօթ չէ որ ինձ տանջում են այսպէս.
Եւ ինչո՞ւ համար. որ չը կարենամ
Այսօր միասին քեզ հետ փախչել ես—
Կարելի՞ բան է.— խոր վշտով նորան
Անգութ սիրելին ականջ էր դնում:
Բայց խորասուզած խառն մտքերում—
«Յամենայն դէպս, շարունակեց նա—
Յիշում եմ դաշտը... տօնն աղմկալից,
Անթիւ գիւղներ... ամբօխն էլ ահա,
Մայրս այս տօնին տարել էր և ինձ.
Ի՞նչ ո՞ւր էիր դու... ինչո՞ւ առանց քեզ
Գիշերով, մենակ թափառում եմ ես:
Շատ ուշ է արդէն... դնանք տուն շուտով...
Ա՛խ, տեսնում եմ ես, գալարի ցնորքներով
Իմ գլուխը լի է: Սխալմամբ էր. ես քեզ
Ուրիշ կարծեցի. հեռու թող ինձ, ծեր.
Դ՞ու ծաղրող, դաժան հայեացքներ ունիս.
Դ՞ու անճոռնի ես... նա գեղեցիկ էր.
Նորա աչքերում սէր էիր կարգում:

Հեշտասիրութիւն—նորա խօսքերում.
 Նորա բեխերը սպիտակ իբրեւ ձիւն,
 Իսկ քոնի վրայ սառել է արիւն:
 Եւ նա վայրենի ծիծաղով ձշաց,
 Ապա մի ջահիլ այծեամից թեթեւ,
 Արագ վեր ցատկեց և վազեց յանկարծ:

Քաշում էր մութը. ելքը կարմրում.
 Կազակի կրակը բոցավառում էր.
 Կազակները ցորեն են եփում.
 Իսկ դրաքանդները Գնէպրի եզերքին
 Զուր էին տալիս անթամբ ձիերին:
 Կարլոսը զարթեց. Օհ, ժամանակ է.
 Մազէսան, զարթիր, տես, լուսանում է:
 Բայց ծեր զեպմանը վաղուց է քնած.
 Խորին թախիծը սիրտն է կրծոտում:
 Անձայն և անխօս թամբելով իւր ձին,
 Փախչող կայսրի հետ արագ սլանում է.
 Մնաս բարեւ տալիս հայրենի հողին,
 Դէմքը կապաղի փայլատակում է:

Անցել է մի դար.—բայց ի՞նչ է մնացել
 Այս հզօր, յայտնի, հպարտ մարդկանցից,
 Որոնք կրքերով միշտ լի են եղել—
 Ո՛չ ոք չէ մնացել նոցա սերնդից:
 Իրանց հետ¹⁸⁷ անդարձ անցել են գնացել
 Անգութ բռնութեան, և թշւառութեան
 Եւ յաղթանակի արիւնոյ հետքեր:
 Եւ հիւսիսային զօրեղ պետութեան
 Պատերազմական, յուզած վիճակում
 Դո՛ւ, Պարսաւայի հերոս, դո՛ւ միայն
 Կանգնեցիր քեզ մի վիթխարի արձան:
 Այն երկրում, որտեղ կարգով կան շարեած
 Անթիւ ջրաղացներ—բարձր, թևաւոր,

Որոնք մի խաղաղ պատմե՛լ են կապած.
 Բենդէրի ամառի լանջեր հեռաւոր,
 Որպեղ ռազմական շիրիմների մօտ
 Թափառում է միշտ գոմէշների հօտ.
 Այնպեղ—աւերած սրահի մնացորդներ,
 Եւ ապա երեք, խոր ընկած հողում
 Եւ մամռով պտրած հին աստիճաններ—
 Շվէդների կաշտի մասին են պատմում:
 Անմիտ հերոսը ահա այնտեղից
 Երկար դիրում էր, կանգնած միայնակ,
 Տաճկական զօրքի շուն աղմկալից,
 Եւ իւր սուրը դրեց նրանց բունչուկի ցած:
 Տխուր ճամբորդը ի զուր կ'որոնի
 Այնպեղ շիրիմը ծերուկ գեղմանի.
 Մոռացւել է վաղուց Մազէպան:
 Միայն սրբազան հանդիսի ժամում,
 Դեռ մինչև այժմ տարին մի անգամ,
 Նորան սպառնալի անէծք են կարդում:
 Բայց պահպանւել է դեռ մի գերեզման
 Ուր երկու Թշառ աճիւն են հանդուում.
 Եկեղեցին նրանց ցուել է օթեան
 Հին արգարների գերեզմաններում:
 Դեռ Դիկանկայում անհոգ ծաղկում են
 Հին կաղնիների շարքերը երկար,
 Որոնք Թոռներին անվերջ պատմում են
 Իրանց զլխաւած հայրերի համար:
 Իսկ ի՞նչ է եղել յանցաւոր դուստրը—
 Աւանդու թիւնը ոչինչ չէ ասում.
 Նորա տանջանքներ, նորա վախճանը
 Ծածկւած են մեզնից դարաւոր մթնում:
 Երբեմն միայն գիւղում ամբոխին
 Երբ կոյր երգիչը Ուկրաինայի
 Գեղմանի երգերն է հնչեցնում,

Նորա յանցաւոր դատեր մասին
Հարեանցի է միայն ակնարկում:

Ժընև 1897

Հեղինակի արած նկատողութիւնների շարունակութիւնը:

20. Կաշուբէլի գիւղը:

21. Արդէն մահաւն դատապարտւած Կաշուբէլին գետմանի զօրքի մէջ րանջանքի ենթարկեցին. թշուառի պատասխաններից երևում է, որ նրան հարցնում էին իւր թագցրած դանձերի մասին:

22. Գետմաններից ոռճիկ սրացող զօրք:

23. Չեչէլը չուսահաղ կերպով պաշտպանում էր Բադուրինին Մեն-շիկովի զօրքի դէմ:

24. Դրեզդէնում, Աւգուստ Կալսրին:

25. «Ա՛խ, Յ. Մ. բոմբ... Ինչ կապ ունի բոմբը իմ քեզ թեւադրած շամակի հետ. գրիւր. ալբ աւելի ուշ է պատահել»:

26. Ինքը Կարլոսը, գիշերով մեր բանակը դիրիբլիս՝ վրաչ հասաւ Կրակի շուրջը նստած կազակների. նա ձին քշեց ուղիղ աչն կողմը և նրանցից մէկին անձամբ հրացանադարկ արեց. կազակները երեք անգամ արձակեցին նրա վրաչ և ծանր վիրաւորեցին ոտքը: